**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**

ՀՀ ԱԺ պետական-իրավական և մարդու իրավունքների պաշտպանության հարցերի մշտական հանձնաժողովի կողմից 2017 թվականի դեկտեմբերի 18-ին քննարկված «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին» Կ-217-14.12.2017-ՊԻՄԻ-011/0, «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին» Կ-217[1]-14.12.2017-ՊԻՄԻ-011/0 և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Կ-217[2]-14.12.2017-ՊԻՄԻ-011/0 Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ

| | **Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը** | **Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը** | **Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)** | **Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի եզրակացությունը)** | **Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը** |
|---|---|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 | 4 | 5 |
| **1.** | **Պատգամավոր Արտակ Զեյնալյան** | «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածի 4-րդ մաս և «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն եւ | Առաջարկվում է էլեկտրոնային եղանակով ներկայացվող փաստաթղթերին նոտարի կողմից վավերացված լիազորագիրը կցել պատճենի տեսքով, քանի որ դատարանը կարող է պարզել դրա իսկությունը փաստաթղթի նույնականացումը հաստատող գաղտնագրի միջոցով, որը երևում է նաև պատճենի վրա: | **Ընդունվել է:** Համապատասխան փոփոխություններ են կատարվել նախագծերում: | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածով օրենսգրքում լրացվող 64.1-րդ հոդվածի 4-րդ մաս | | | |